

ՍԻՈՆԻԶՄԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ*

ՅԱԻՐ ԱՐՈՆ (Իսրայել)

Ուլքե՞ր էին Հայոց ցեղասպանության իրագործողները: Ո՞վ գիտեր այդ մասին: Ինչպիսի՞ն էր դրանում Գերմանիայի դերը: Ինչպե՞ս արդարեցրեցին Հայոց ցեղասպանությունը Մեծ պետությունները: Այդ հարցերին էր անդրադարձել Պաղեստինում Բրիտանական հայերի հետախույզ Ահարոն Ահարոնսոնն իր ներկայացրած՝ «Հայաստանի համար» (Pro Armenia) գաղտնի զեկուցագրում, որին անգլիացիները տվել են այլ անվանում՝ «Թուրքերի վերաբերմունքը հայերին» (The Turkish Treatment of Armenians): Այդ զեկուցագիրը շարժել էր Մեծ Բրիտանիայի բարձր ռազմական և քաղաքական շրջանակների ուշադրությունը: Ներկա հրատարակման խնդիրն է՝ ընդհուպ բնութագրի տալ և փորձել ի մի բերել ու վերլուծել «Յիշուվ»-ի (մինչև 1948թ. Իսրայելի պետության ստեղծումը Պաղեստինում հրեական համայնքի), սիոնիստական շարժման և Իսրայելի պետության դիրքորոշումները:

Հիշատակվել, նույնիսկ ընդգծվել է Առաջին համաշխարհային պատերազմից առաջ և պատերազմի տարիներին իրագործված Հայոց ցեղասպանության հանդեպ հրեաների վերաբերմունքի առանձնակի նշանակությունը: Նախկինում այդ հարցը հետևողականորեն չէր ուսումնասիրվում ու քննարկվում: Մեր հետազոտությունը հիմնվում է Առաջին աշխարհամարտի ժամանակաշրջանի փաստաթղթերի և ակամատեսների վկայությունների վրա, որոնք երբևէ չեն հրատարակվել և որոնք լույս են սփռում սիոնիստական շարժման պատմության նախկինում անհայտ էջերի վրա:

Շատ նմանություններ կան այդ երկու ժողովուրդների պատմության մեջ, որոնք որպես էթնոկրոնական փոքրամասնություն երկար ժամանակ ապրել են իրենց հանդեպ թշնամաբար տրամադրված մեծամասնության միջավայրում: Հայերն ապրում էին իրենց պատմական հայրենիքում, այն դեպքում, որ հրեաներն ապրում էին օտարության մեջ: XIX դարի երկրորդ կեսին ինչպես էրենց Իսրայելում «Յիշուվ» հրեական փոքրաթիվ համայնքը, այնպես էլ հայերը (նաև հույները)

* Հոդվածը կազմված է ըստ հեղինակի՝ 2002թ. հոկտեմբերի 7-8-ին Մոսկվայում «Հայերը դարերի սահմանաբաժնում...» միջազգային կոնֆերանսում կարդացած զեկուցման: Թարգմանված է Համաշխարհային հայերի կոնգրեսի Ռուսաստանի հայերի միության «Вестник» հանդեսից: Մոսկվա, 2004թ., էջ 124-132:

«միլլետի» կարգավիճակ ունեին և գտնվում էին անկում ապրող Օսմանյան կայսրության արատավոր իշխանության ներքո: Ավելին՝ XIX դարի երկրորդ կեսին սկսվեց արթնանալ հայերի ու հրեաների ազգային ինքնագիտակցությունը: 1908թ. երիտթուրքերի իշխանության գալն այդ երկու ժողովուրդների համար մեծ հույսեր արթնացրեց, սակայն այդ հույսերը հուսախաբության փոխակերպվեցին:

Վերջին հաշվով այդ երկու ժողովուրդների ճակատագրերը տարբեր եղան: Հայերը, ի տարբերություն էրեց Իսրայելի հրեաների, ենթարկվեցին ցեղասպանության՝ Հենրի Մորգենթաուի բնորոշմամբ՝ «ժամանակակից պատմության այդ մեծագույն չարիքին»: Հետագայում, ինչպես հայտնի է, հրեաները Հոլոքոստի զոհեր դարձան...

Հակիրճ հիշատակենք «Յիշով»-ի և սիոնիստական շարժման այն անձերի մասին, որոնք շահագրգիռ վերաբերմունք էին դրսևորում Հայոց ցեղասպանության հանդեպ, ողբերգություն, որը մեծապես ցնցեց նրանց ու ստիպեց բողոքել ու քննադատել այդ դեպքերի հանդեպ այլ հրեաների դիրքորոշումը: Նրանց կարելի է «եռակտոր» անվանել: Նկատի ունենք երկու վիճահատույց տարափարծություն, որոնք ծագել էին մույնիսկ ավելի վաղ, քան 1915թ. ցեղասպանությանը: Լեւոն Գիւլեմը՝ դա հայացքների այն ընդգրծված տարբերությունն էր, որ ծագել էր սիոնիստական շարժման հիմնադիրներից Թեոդոր Հերցելի և Բերնարդ Լազարի միջև (վերջինս ապրում էր Ֆրանսիայում, որոշ ժամանակ համարվում էր սիոնիստական շարժման անդամ և առաջիններից էր, որ հրապարակայնորեն հանդես եկավ ի պաշտպանություն Դրեյֆուսի):

Հերցելի քաղաքական նկրտումները XIX դարի վերջերին ուղղված էին Թուրքիայի՝ հրեաների հանդեպ բարենպաստ վերաբերմունքը շահելուն: Նա ձգտում էր սուլթան Աբդուլ Համիդ երկրորդից որոշ դիվանագիտական շնորհներ կորզել: Ցավոք՝ հենց Աբդուլ Համիդ երկրորդի իշխանության օրոք՝ 1894-1896թթ., սպանվեցին 200000-300000 հազար հայեր: Հերցելն ուզում էր ի շահ իրեն օգտագործել սուլթանի ակնհայտ դժվարությունները և սուլթանին ֆինանսական օգնություն, սուլթանի ու հայերի միջև միջնորդություն ու մաս՝ հայերի կոտորածից հետո Արևմուտքի հանրային կարծիքն ի շահ սուլթանին բարելավելուն սատարել խոստացավ սուլթանին: Հերցելը հույս ուներ դրա փոխարեն էրեց Իսրայելում հրեաների բնակեցման հավատարմագիր ստանալ: 1901թ. Բագելում կայացած սիոնիստական հինգերորդ համագումարը հրապարակայնորեն հանդես եկավ ի պաշտպանություն սուլթանի: Լազարը չէր կարող համակերպվել դրա հետ:

Ֆրանսերեն լեզվով լույս տեսնող «Pro Armenia» հայկական հանդեսում մա հրապարակեց «Սիոնիստական համագումարը և սուլթանը» սուր քննադատական հոդվածը, որով դատապարտում էր սիոնիստական համագումարին՝ ընդհանրապես և Հերցելին՝ մասնավորապես: Հերցելի բազմաթիվ կենսագիրներն աչքաթող են անում հայերի ողբերգության հանդեպ նրա այդ միտումնավոր դիրքորոշման փաստը:

Հետաքրքրություն ներկայացնող մի այլ տարակարծություն, որ ծագել էր էրեց Իսրայելի հրեական համայնքի շրջանակներում և որը քննարկվում էր հրեական մամուլում, առնչվում էր «Հացվի» լրագրի խմբագիր Իթամար Բեն-Ավիի՝ 1909թ. հրատարակված մի հոդվածին: Այդ ժամանակ Ադանայում և Կիլիկիայում կոտորածի զոհ էին գնացել 200000-300000 հայ: Իր «Սենը» («Անահնու») հոդվածում Բեն-Ավին սուր քննադատության էր

ենթարկել հրեաներին այն բանի համար, որ նրանք զգայուն են լոկ իրենց սեփական ազգի խնդիրներին և անտարբերություն են դրսևորում, երբ զոհ են դառնում այլ ազգեր: Այդ հողվածը մեծ արձագանք ունեցավ, հեղինակը թե՛ Էրեց Իսրայելում, թե՛ այլ երկրներում ենթարկվեց հրեական մամուլի հարձակումներին:

ԷՐԵՑ ԻՍՐԱԵԼԻՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՍՏԱՐՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՇԱՐՈՒՄ

Հորդանան գետից արևմուտք բնակվող, ընդհանուր առմամբ 700 հազար հրեաներից Էրեց Իսրայելի «Յիշուվ» ոչ մեծաքանակ հրեական համայնքը կազմում էր մոտ 85 հազար մարդ: Հրեական համայնքը երկփեղկված էր: Համայնքի կեսը «Հին Յիշուվականներն» էին, իսկ երկրորդ կեսը՝ այն սիոնիստներն էին, որոնք Էրեց Իսրայել էին գաղթել 1891թ. հայրենիք վերադառնալու սիոնիստական շարժումը սկսվելուց հետո:

Հրեա ժողովուրդը, նաև իր հակումներով ու աշխարհագրական բնակչությամբ, բաժանված էր երկու թշնամի էմիրաթների միջև. այստեղանդերձ սիոնիստական շարժումը մինչև պատերազմի վերջը պաշտոնապես չեզոքություն էր պահպանում: «Յիշուվ»-ը մեծ ջանքերի գնով կարողացավ գոյատևել: Նրա ճակատագիրը կարող էր շատ ավելի ողբերգական լինել: Այդ առումով սիոնիստական քաղաքականությունը թերևս ճիշտ էր: Հրեաները գիտեին հայերի կոտորածների մասին և զգուշանում էին, որ իրենց նույնպես նույն ճակատագիրը կվիճակվի: Ժամանակի վկայություններն ու օրագրային գրառումները վկայում են, որ հրեական «Յիշուվ» համայնքի անդամները և նրա ղեկավարները տեղյակ էին իրերի դրության մասին:

... Հրեաների՝ մամանտիպ ճակատագրի հանդեպ վախն առանձնակի ընդգծված երևակվում էր պատերազմի տարիների երկու միջադեպերի՝ 1917թ. ապրիլին հրեաների տարագրման և 1917թ. հոկտեմբերին բրիտանամետ լրտեսական (Նիլի խումբը) ցանցի ի հայտ բերման ժամանակ:

ՆԻԼԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԸ ՀԱՅԵՐԻՆ

Նիլին բրիտանամետ հետախուզական խումբ էր, որ հայերի հանդեպ իր որոշակի վերաբերմունքով առանձնանում էր «Յիշուվ» համայնքում: Պատերազմի տարիներին այն բրիտանացիների համար տեղեկություններ էր հավաքում թուրքական բանակի մասին: Այդ խումբը հայտնաբերվեց 1917-ի հոկտեմբերին, և կազմակերպության մի քանի կարևոր անդամներ մահապատժի դատապարտվեցին: Նշենք, որ իր գործունեության ժամանակ այդ խմբի բարձր ղեկավարությունը վճռականորեն հավաստում էր հայերին բաժին հասած ողբերգության փաստը: Եթե ժամանակ առ ժամանակ հիշվում է այդ կողմնորոշման մասին, վերջինիս առաջին մանրագնին վերլուծությունն ու ընդգրկումն գիտական մեկնաբանումը տրվել է մեր կողմից:

Խմբի գլխավոր անդամներից մեկը՝ Ավշալոմ Ֆայնբերգը, 1907թ. գրեց «Ճնշված ժողովուրդների ժամանակը» (The Time of Oppressed Peoples) գիրքը, իսկ 1915թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին կազմեց երկու

գեկուցագիր, ուր հիշատակվում էր հայերի կոտորածների մասին: Աթիթում ամերիկյան փորձարարական (գյուղատնտեսական) կայանի (ուր կառավարիչը Նիլի խմբի ղեկավար Ահարոն Ահարոնսոնն էր) հոգեբարձուների խորհրդի քարտուղար Հենրիետտե Շոլդին ուղղված իր գեկուցագրում Ֆայնբերգը գովեստի խոսքեր էր ասում ամերիկայի դեսպան Մորգենթաուի հասցեին և բացահայտորեն հարց էր դնում. «Ե՞րբ է հասնելու մեր հերթը»:

Կահիրեում բրիտանական հետախույզին ուղղված հետախուզական գեկուցագրում առկա է մի «հայամետ» հատված, ուր ափսոսանք է հայտնվում այն բանի համար, որ Բրիտանական և քրիստոնեական աշխարհն աջակից չի հայերին. այդ փաստաթղթում անգոր ափսոսանք է երևակվում հայերին օգնելու՝ իր իսկ անկարողության համար:

Հայերի կոտորածի մասին մի կարևոր վկայության ենք հանդիպում 1916թ., այդ ժամանակ ԱՄՆ-ում բնակվող Ալեքսանդր Ահարոնսոնի «Թուրքերի հետ Պաղեստինում» ("With the Turks in Palestine") գրքում: Դեռ 1915թ. նոյեմբերին Աարոնսոնը հրապարակեց սեղմ, բայց տպավորիչ մի փաստաթուղթ՝ «Հայաստան» վերնագրով, որով Օսմանյան կայսրության դեմ համատեղ պայքարի համար հայերին ու հրեաներին միավորվելու կոչ էր արվում:

Նիլի խմբի մի այլ ակնառու գործիչ՝ Մառա Ահարոնսոնը, 1915թ. դեկտեմբերին Ստամբուլից Հայֆա ճանապարհորդելիս անձնապես ակնատես է եղել հայերի կոտորածին և այդ մասին պատմել է իր գործընկերներին: Հայերի հանդեպ թուրքերի հանցագործության մասին նա պատմել է նաև 1917թ. հոկտեմբերին, իր մահից առաջ, երբ թուրքական բանտում տանջանքների ենթարկվելուց հետո փորձեց ինքնասպան լինել:

Էյթան Բելկինդը Դեր-Չորի մոտակայքում տեղակայված թուրքական բանակի սպա էր: Ինչպես հայտնի է, այդտեղ մոտ 300000 հայ է սպանվել, նրանք, ովքեր կարողացել էին կենդանի մնալ անապատի միջով «մահվան գաղթից»: Բելկինդն այսպես է նկարագրում տեսածը. «Նրանք հայերին հրամայեցին փշոտ թփերից մացառ հավաքել և դրանցից մի մեծ բուրգ կազմել... Հետո նրանք ձեռք առ ձեռք կապտեցին բոլոր հայերին, մոտ 5000 մարդ, շրջանաձև կանգնեցրին նրանց այդ բուրգի շուրջ և կրակ տվին մացառը՝ կրակը երկինք բարձրացավ: Մի քանի միլ հեռավորությունից լսվում էին հայկական խարույկի վրա կենդանի-կենդանի այրվող դժբախտ զոհերի ճիչերը: Ես փախա այդ վայրից, քանզի ի վիճակի չէի տեսնել այդ սարսափելի պատկերը... Երկու օր հետո ես վերադարձա և տեսա հազարավոր մարդկանց ամփսացած դիերը»:

Նշեցինք արդեն, որ Նիլի խմբի ղեկավարն Ահարոն Ահարոնսոնն էր, խարազմատիկ, կիրթ, լայնախոհ մի անձնավորություն, որ փորձում էր օգնել հայերին, ընդհուպ մինչև 1919թ. մայիսին իր հանելուկային մահը: Ահարոնսոնը փաստագրում էր հայերի հետ պատահածը: Նրա գեկուցագրերից, փաստաթղթերից և օրագրերից ամենակարևորը բրիտանական ռազմական նախարարությանը ներկայացրած «Հայաստանի համար» վերտառությամբ գաղտնի գեկույցն էր: Անգլիացիները մեծ հետաքրքրությամբ և ուշադրությամբ վերաբերվեցին այդ գեկույցին՝ այն ամենաբարձր պաշտոնական ատյաններ ուղարկվեց և խմբագրումից ու համակարգումից հետո դրան տրվեց «Թուրքերի վերաբերմունքը հայերին» նոր անվանումը: Այդ գեկույցում Ահարոնսոնն անդրադառնում էր ցեղասպանությանը (եթե նույնիսկ այդ ստույգ տերմինն այդ ժամանակ դեռ չէր օգտագործվում)

առնչվող գլխավոր հարցերին. մասնավորապես՝ ո՞վ գիտեր այդ մասին, թուրքական բնակչության ո՞ր հատվածն էր մասնակցում հայերի սպանություններին, գերմանացիների դերը ցեղասպանության մեջ, քննադատական մոտեցումը՝ Լեպսիտաի վկայություններին, ինչպե՞ս են Մեծ տեղությունները վերաբերվում ցեղասպանության փաստին և այլն: Իր զեկույցում Ահարոնսանն իր անձնական կարծիքը, մարդկային ու բարոյական վերաբերմունքն էր արտահայտում ցեղասպանության նկատմամբ և դիտում էր այդ՝ հենց հրեական տեսանկյունից:*

ՀՐԵԱՆԵՐԻ, ԱՐԱԲՆԵՐԻ, ՀԱՅԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

1917-1919թթ. առաջ եկավ հրեա-արաբա-հայկական այլանսի գաղափարը: Դրա հիմնական ռզեշնչողը քրիստոնական դիվանագետ սեր Մարկ Սայքսն էր, որը և փորձում էր կյանքի կոչել այդ գաղափարը: Նա կարևոր դեր էր ստանձնել պատերազմի տարիներին Մեծ Բրիտանիայի մերձավորարևելյան քաղաքականության մշակման խնդրում և օժանդակեց 1917թ. նոյեմբերի 2-ի՝ Բալաֆուրի հռչակագրի երևան գալուն: Սայքսը կարծում էր, որ պատերազմից հետո պետք է մի նոր Մերձավոր արևելք ստեղծել, որը հիմնված պետք է լինի հրեաների, արաբների և հայերի միության վրա: Արաբները վերապահությամբ էին վերաբերվում այդ գաղափարին, հայերն ու հրեաները համաձայն էին դրան ու ձգտում էին այն կյանքի կոչել:

Այդ ձեռնարկմանը սիոնիստների աջակցությունը քննվում և հետազոտվում է երկու տեսանկյունից.

ա. Ահարոն Ահարոնսոնի, Սայքսի և Լոնդոնում, Փարիզում ու ԱՄՆ-ում հայ բարձրաստիճան ներկայացուցիչների սերտ առնչումների ենթատեքստում,

բ. Լոնդոնում սիոնիստական «պաշտոնական» ներկայացուցիչների (Հայն Վեյցմանի և Նաում Մոկոլովի), Սայքսի և հայերի (այդ թվում՝ Փարիզում հայկական պատվիրակության ղեկավար Նուրար փաշայի) հետ հարաբերությունների ենթատեքստում:

Այդ գաղափարի իրականացումը Սայքսի (որը մահացավ 1919թ. փետրվարին) ազդեցության նվազեցմանը և անգլիական քաղաքականության առաջնահերթությունների փոփոխմանը զուգընթաց ի չիք դարձավ: Հայերին՝ նրանց բաժին հասած ռդերգությունից հետո, լքեցին:

ԻՆՉՊԵՍ Ե ԷՐԵՅ ԻՍՐԱՅԵԼԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՏԱՅՈՒԵԼ ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾԸ

Գրականությունը նաև իրական կայնքի հայելին է: Իրողությունների շարադրմամբ այն նաև լրացուցիչ փաստագրություն է դառնում: Դրա միջոցով կարելի է հետևել էրեց Իսրայելի «Յիշուվ» համայնքի վերաբերմունքին՝ հայերի ցեղասպանությանը: Մասնավորապես՝ մեր կողմից

* Հեղինակի գրքում բերվում է այդ փաստաթուղթն ամբողջությամբ, տրվում է դրա վերլուծությունը:

քննության են ենթարկվել գեղարվեստական գրականության մեջ Հայոց ցեղասպանության թեմային և Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրերը» գրքին հանրության անդրադարձները:

Հայերի ցեղասպանությանն է նվիրված Էրեց Իսրայելում 1920-ական թվականներին գրված երկու գրական ստեղծագործություն: Մեկը՝ Ահարոն Ռուվենիի «Մինչև Երուսաղեմ» եռերգությունն է, վեպ, որ պատմում է այն մասին, թե ինչ էր կատարվում Երուսաղեմում Առաջին աշխարհամարտի տարիներին: Այդ գրքի առաջին հրատարակությունը ժամանակի մամուլը հիացական գնահատանքին չարժանացավ, իսկ ահա 1960-ական և 80-ական թվականներին այդ վեպի կրկնակի հրատարակությունները ոգևորությամբ ու հիացական գրախոսություններով ընդունվեցին: Իր քաղաքական հայացքների համար Ռուվենին գրական շրջանակներում առանձնապես մեծ հանրաճանաչություն չէր վայելում: Հայկական հարցն այդ գրքի գլխավոր թեման չէ, բայց այդ թեմային վերաբերող գլուխներն առանձնակի հետաքրքրության են ներկայացնում:

Շմուել Բասսի արդեն մոռացված «Արա» վեպում, որը հրատարակվել է 1928թ., վեպի գլխավոր հերոսուհին՝ հայուհի Արան, Առաջին աշխարհամարտի վերջերին ապրում է Հայֆայի մոտակայքում գտնվող՝ փախստական հայերի ճամբարում: Այդ հերոսուհու կերպարով հեղինակը մանրամասն ու հուզիչ կերպով նկարագրում է հայերին բաժին հասած ողբերգությանը: Երբ 1928-ին այս վեպը լույս տեսավ, գրաքննադատների մի մասն ավելի քան զուսպ վերաբերմունք ցույց տվեց այն փաստին, որ հեղինակը քննում է մի այլ ժողովրդի ողբերգություն:

ՖՐԱՆՍ ՎԵՐՖԵԼԻ «ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ ԶԱՌԱՍՈՒՆ ՕՐԵՐԸ» ՈՐՊԵՍ ԽՈՐՀՐԴԱՆԻՑ ՈՒ ՕՐԻՆԱԿ

Գիրքը, ինչպես հայտնի է, Գերմանիայում լույս տեսավ 1933-ին: 1934-ին արդեն այն թարգմանվել էր հիբրուերեն: Էրեց Իսրայելի գրաքննադատները բարձր գնահատական տվեցին այդ գրքին, բայց տարակարծություններ կային այն հարցում, որ հրեա գրողը նկարագրում է այլ ժողովրդի ողբերգությունը: Այսուհանդերձ՝ Վերֆելի վեպը 1930-ական, 1940-ական թվականներին հսկայական ազդեցություն ունեցավ Եվրոպայի և Էրեց Իսրայելի երիտասարդության վրա: Հետաքրքիր մի մանրամաս. երբ Երկրորդ աշխարհամարտի ժամանակ գերմանացիների կողմից Էրեց Իսրայելի գրավման վտանգ առաջ եկավ, հրեաների ինքնապաշտպանության սակավ ուժերը պաշտպանական պլան էին մշակել և այն անվանում էին տարբեր կերպ՝ «Մասսադի պլան», «Կարմելի պլան», մակ՝ «Մուսադադի պլան»: 1940-ականների սկզբներին դիմադրության շարժման հրեա մարտիկները հետաքրքրությամբ կարդում էին այդ գիրքը: Այդ վեպի քննարկման մի շարք արձանագրություններում, մակ՝ օրագրերում մենք բազում վկայություններ ենք գտնում այն մասին, թե ինչպիսի հսկայական ազդեցություն է գործել այդ վեպը:

Այսուհանդերձ կարող ենք արձանագրել, որ Իսրայելի ժամանակակից երիտասարդ սերունդը ոչինչ չի լսել Մուսա լեռան մասին, երիտասարդներից շատերը, ցավոք, ոչինչ չգիտեն հայ ժողովրդին բաժին հասած ցեղասպանության մասին:

ԻՍՐԱԵԼ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Ինչ վերաբերում է հայերի ցեղասպանության հանդեպ Իսրայելի տարբեր պաշտոնական իշխանությունների դիրքորոշմանը, ապա հարկ է նշել, որ այդ հարցը նրանք շրջանցում են ու բացառում ցեղասպանության փաստը: Իսրայելի պետությունը ձեռնպահ է մնում ցեղասպանության բառի հիշատակումից: Պետական հեռուստատեսության հաղորդումներում հայերի ցեղասպանության փաստի համարյա իսպառ բացակայությունը բացատրվում է Իսրայելի՝ Թուրքիայի հետ հարաբերություններով թելադրվող գործոններով:

Չորս կարևոր իրադարձություն դրեցին մամուլում քննարկել հայերի ցեղասպանության հանդեպ կառավարության պաշտոնական դիրքորոշումը:

1978թ. արգելվեց «Հայկական թաղամասը՝ Երուսաղեմում» կինոնկարի ցուցադրությունը. 1982թ. իսրայելական կառավարությունը միջամտեց Հոլոքոստի և ցեղասպանության խնդիրներին նվիրված միջազգային կոնգրեսի աշխատանքներին. 1989թ. Իսրայելը ջանքեր գործադրեց, որպեսզի բացառի հայերի ցեղասպանության հիշատակումը՝ ամերիկյան օրացույցում. 1990թ. իսրայելական հեռուստատեսությամբ արգելվեց ՄՄՆ-ում նկարահանված «Հայկական ճանապարհորդություն» կինոնկարի ցուցադրությունը: Հայերի ցեղասպանությանն առնչվող հրեական-իսրայելյան պատմական խղճի ընկալման տեսանկյունից էլի մեկ տարածայնություն ի հայտ եկավ «Աշխարհում տառապանքների ընկալումը. 20-րդ դարի ցեղասպանությունները» ուսումնական ծրագրի առիթով: Այդ ծրագրում խոսվում էր հայերի և Երկրորդ աշխարհամարտի ժամանակ զնչուների ցեղասպանությունների մասին, ավելի ուշ՝ հիշատակվում էին նաև վերջին շրջանի ցեղասպանությունները (օրինակ՝ Բոսնիայում և Ռումանիայում):

Վեճը ծնվեց հայերի ցեղասպանության փաստի ընդունումը բացառելու առիթով: Ի վերջո՝ Իսրայելի կրթության նախարարությունը մերժեց այդ ծրագիրը: Չնայած դրան և ի հակառակ իշխանությունների պաշտոնական դիրքորոշման Իսրայելի որոշ միջնակարգ դպրոցներում ուսուցանվում է այդ ծրագիրը: Երկու գործոն որոշեցին այդ ծրագրի բացառումը.

ա. թուրքական կառավարության կողմից ճնշումը;

բ. մի շարք հրեական ազդեցիկ խմբակցությունների հակազդեցությունը, որոնք մտավախություն ունեին, որ այդ ծրագիրը կարող է վնասել Հոլոքոստի հայացակարգի բացառիկությանը:

Հարկ է նշել, որ Իսրայելի համալսարանների և մանկավարժական քոլեջների ուսանողների կարծիքի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հայերի և զնչուների ցեղասպանությունների մասին նրանց իմացությունը բնորոշվում է «բոլորովին չգիտեմ» կամ «շատ քիչ բան գիտեմ» մակարդակով: Այդ հարցում Իսրայելի հրեաների անտեղյակությունը թերևս ավելի բարձր է, քան շատ երկրներում Հոլոքոստի մասին նվազ տեղյակությունը:

Ինչպիսի՞ն է այդ իրավիճակի առանձնահատկությունը: Մենք անվերջ ասում ենք, որ Իսրայելը, որը բոլոր ցեղասպանություններից ամենահերշտամբի գոհների՝ հրեաների ազգային օջախն է, առանձնակի բարոյական, նաև՝ քաղաքական պատասխանատվություն է կրում այն բանի համար, որպեսզի ցեղասպանության հարցն աշխարհի տարբեր երկրներում

բանավեճերի օրակարգի հարց դառնա: Մի՞թե Հոլոքոստը միակ ուշադրության արժանի ցեղասպանությունն է: Կարծում ենք, որ կարևոր է մեր երիտասարդությանը դաստիարակել ուրիշների տառապանքների նկատմամբ կարեկցանքի ոգով, ամրապնդել համընդհանուր մարդասիրական արժեքները, որոնք հրեական ավանդույթների անքակտելի մասն են կազմում:

Այդ ենթատեքստում հարկ է հիշել կրթության նախարար Յոսի Մարիդի հայտարարությունը, որը նա արել է 2000թ. ապրիլի 24-ին, Երուսաղեմի հայկական համայնքի սգո հավաքություն: Նախարարն ասել է. «Երկար տարիներ, բավականին երկար տարիներ դուք միայնակ էիք նշում հիշատակի այդ օրը: Ես գիտակցում եմ այստեղ իմ՝ այլ իսրայելցիների հետ ներկայության ողջ կարևորությունը: Այսօր, գուցե թե առաջին անգամ, դուք միայնակ չեք... Ես այստեղ եմ գտնվում որպես հրեա, որպես իսրայելցի և որպես Իսրայելի կրթության նախարար»:

Նախարարն իր հայտարարությունն ավարտել է այն հավաստումով, որ կհասնի այն բանին, որ Հայոց ցեղասպանության փաստը մտցվի Իսրայելի միջակարգ դպրոցների ուսումնական ծրագրի մեջ: Նա ասել է. «Ես կուզեի ականատեսը լինել այն բանի, որ Հայոց ցեղասպանության փաստը դառնար ցեղասպանության՝ այդ մեծագույն ու անմարդկային ոճրագործության մասին դասընթացի հիմնական բաժիններից մեկը: Հայոց ցեղասպանության փաստը պետք է կարևոր տեղ գրավի այն ուսումնական ծրագրում, որն արժանին պետք է հատուցի ձեզանից յուրաքանչյուրի ազգային և անձնական հիշողությանը, ձեր ազգի բոլոր ներկայացուցիչների հիշողությանը: Դա՝ մեր պարտքն է ձեր առջև, դա՝ մեր պարտքն է ինքներս մեր առջև»:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Մեր՝ խնդրո առարկա հետազոտությունը թույլ է տալիս ուսումնասիրել մի շատ կարևոր երևույթ՝ օտարների վերաբերմունքն այլ ազգերի զանգվածային կոտորածներին: Մեր ուսումնասիրության որոշակի հատվածը վերաբերում է հրեաների արձագանքներին՝ Հայոց ցեղասպանությանը, սակայն հարկ է նշել, որ հրեական «Յիշուվ» համայնքի մեծ մասն անտարբերություն էր դրսևորում և չէր արտահայտում հայերին բաժին հասած ողբերգության հանդեպ իր վերաբերմունքը նույնիսկ այն դեպքում, երբ տեղյակ էին տեղի ունեցածին: Լրիվ ուշադրության կենտրոնացումը լուրջ հրեաների, իրականում՝ սիոնիզմի ճակատագրի նկատմամբ, ի թիվս այլ դրոպապատճառների այն հիմնական պատճառն էր, որով բացատրվում է «Յիշուվ» հրեական համայնքի ղեկավարների և սիոնիստական շարժման ղեկավարների՝ հայերի ողբերգության հանդեպ անտարբերությունը:

Նշվեց արդեն, որ «Յիշուվ»-ի նշանակալի մասը թուրքամետ կողմնորոշում ուներ: Մենք ուսումնասիրում ենք Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ թուրքական բանակի շարքերում ծառայած՝ Դավիդ Բեն-Հուրիոնի, Իսհակ Բեն-Յվաի, «Հաշմեր», Միոնի Պոալներ և Սոցիալիստական ինտերնացիոնալ կազմակերպությունների, Էրեց-Իսրայելի, երիտասարդ հրեաների և Ժաբոտինսկու դիրքորոշումները: Անգլամետ դիրքորոշում ունեցող Ժաբոտինսկին արտահայտել է իր կարծիքը Հայոց ցեղասպանության մասին, բայց նրա դիրքորոշումը հիմնականում պրագմատիկ ու անդեմ էր:

Ե՛վ «Յիշով»-ում, և՛ սիոնիստական շարժման մեջ բոլոր նրանք, ովքեր իրենց բողոքի ձայնն էին բարձրացնում Հայոց ցեղասպանության դեմ, բնորոշվում էին երկու հատկանիշով: Առաջին՝ բողոքողների մեծամասնությունն Իսրայելի բնիկ բնակիչներ էին. երկրորդ՝ նրանք, ովքեր իրենց վերաբերմունքն էին արտահայտում Հայոց ցեղասպանության մասին, այս կամ այն առումով այլախոհներ էին, մարդիկ, ովքեր քննադատաբար էին վերաբերվում սիոնիստական իստեբլիշմենտին:

Իր՝ «Էյխմանը Երուսաղեմում» գրքում Հաննա Արենդտն առաջ է քաշում չարի սովորականության տեսությունը: Հարկ է թերևս խորհել «անտարբերության սովորականության» հայացակարգի մասին: Յեղասպանության տարբեր միջադեպերի նկատմամբ զնալով ավելի որոշակիորեն ուրվագծվող անտարբերության մոտեցումը, կարծում ենք, հենց այդ՝ անտարբերության, սովորականության դրսևորումն է:

Բազմաթիվ մարդկանց՝ չարի գոհերի համդեպ վերաբերմունքը բնութագրվում է անտարբերությամբ, կոնֆորմիզմով, մույնիսկ՝ օպորտունիզմով: Հայոց ցեղասպանության ժամանակաշրջանի հանգամանքների քննությունը վկայում է, որ չնչին բացառությամբ, հրեաները մույնպես զերծ չէին այդ «անտարբերության սովորականությունից»:

ԶՈՀԵՐԸ՝ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ԵՎ ՀԱՄԵՆԴՀԱՆՈՒՐ

Ակադեմիական շրջանակներում շարունակվում է ցեղասպանության բնորոշ հատկությունների և Հոլոքոստի յուրօրինակության մասին բանավեճը: Մենք ընդունում ենք հրեական Հոլոքոստի առանձնահատուկ գործոնների առկայության փաստը, գործոններ, որոնք որոշ կարևոր տարբերություններ են ծնում այդ իրադարձությունների միջև: Այդուհանդերձ այդ երկու իրադարձությունների համեմատությունը կարևոր է ինչպես գիտական հետազոտության, այնպես էլ պատմական հիշողության համար: Հարկ է ճշտել, թե ի՞նչ ընդհանրություններ կան այդ երկու իրադարձությունների միջև:

Կարծում ենք, որ այն բոլոր պատճառները, որ պարտադրում են հիշել Հոլոքոստը, մույն կերպ պարտադրում են հիշել Հայոց ցեղասպանությունը: Այնինչ թուրքական իշխանությունները, որոնք իշխանության են եկել այդ հանցագործությունն իրագործողներից հետո, առանց բացառության շարունակում են ժխտել ցեղասպանության փաստը: Իսկ ի՞նչ կլիներ, եթե Գերմանիան ժխտեր Երկրորդ աշխարհամարտի ժամանակ գերմանացիների հանցագործությունները... Այդքանով իսկ Հայոց ցեղասպանության իրողության ճանաչումն ունի հսկայական պատմական, բարոյական և լուսավորչական նշանակություն: Մռայլ անցյալի իմացությունը և հիշատակումն ապագայում նման հանցագործությունների կանխման կարևոր, թեկուզ ոչ բավարար, մախապայմանն է: Հայոց ցեղասպանության անտեսումն ունի, իհարկե, կարևոր նշանակություն այն առումով, որ Իսրայելը ներկայանում է որպես Հոլոքոստի գոհերի հիշատակը մարմնավորող պետություն: Հոլոքոստը, փաստորեն, Իսրայելում հրեականության համախմբման գործում կարևոր ու հիմնական միջոցներից մեկն է: Այն դեռ կմնա Իսրայելի ինքնատիպության կարևոր տարրը:

Այսուհանդերձ, գտնում ենք, որ խրայելցիները պետք է փնտրեն ու գտնեն Հոլոքոստից բխող՝ սիոնիստական հրեական և համընդհանուր «դասերի» միջև ավելի համապատասխան հավասարակշռություն: Խոսելով Հոլոքոստի մասին, ապագա սերունդների գիտակցության մեջ ներդնելով Հոլոքոստի մասին հիշողությունը հարկ է ունենալ հետևյալ հիմնական մոտեցումը՝ մարդկային կյանքը նույն ձևով արժեքավոր է բոլոր մարդկանց համար, անկախ նրանից թե նա հրեա է, գնչու, հայ թե արաբ: Այդ նպատակին հասնելու համար պետք է մեկտեղել երկու հիմնական սկզբունք, որոնք արտաքինապես հակոտնյա են թվում. մի կողմից՝ շեշտել Հոլոքոստի յուրօրինակությունը, մյուս կողմից՝ ավելի շեշտադրված խոսել այլ ժողովուրդներին բաժին հասած աղետների՝ պատմության մեջ այլ ցեղասպանությունների մասին: Այդ երկու մոտեցումների միջև չկա հակադրություն: Խոսքն անսովոր և լայն տարածում ունեցող գաղափարների սինթեզի, համակցման մասին է: Այդ համադրումը բարոյական և հոգևոր իմաստավորում և ուժ կհաղորդի Հոլոքոստի զոհերի հիշատակին ու հրեաների արդար պահանջին: Մենք չպետք է երկմտենք, թե այդպիսի համադրումը կծնի Հոլոքոստի նկատմամբ հրեական տեսանկյան նվազեցում ու թուլացում:

Резюме

Сионизм и геноцид армян.

Яир Арон

Каково было отношение чужих наций к погромам других наций, в частности отношение евреев к геноциду армян до и во время Первой мировой войны? Какова позиция разных официальных кругов Израиля в этом вопросе?

Задача данной статьи на основе исследованных автором документов, свидетельств времен Первой мировой войны – попытаться представить отношение к вышеупомянутой проблеме «Юишув» (еврейская община в Палестине до 1948г.), сионистического движения и вынешних официальных властей Израиля.

Summary

Zionism and the Armenian Genocide.

Yair Aron

What was the attitude of Foreign nations and, especially, of the Jews to the pogroms of other nations before and during World War I? What it the position of the official circles of Israel to this matter?

The task of the article is to try and present the attitude of Uishuv (Jewish community in Palestine before 1948), Zionist movement and the present official authorities of Israel to the above-mentioned problem based on examination of documents, testimonies from the times of World War I.